**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ի ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N «ՎՁՄՋՔ-ԳՀԱՇՁԲ-ՍԴ-19/1»**

ք. Ջերմուկ «05» օգոստոսի 2019թ.

Ջերմուկի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մավշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մխիթար Մաթևոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված հիմնանորոգման և արդիականացման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ սյուն թվականի նոյեմբերի 30-ը.

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 (հարյուր) տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության

համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

**5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **32 472 000** (երեսուներկու միլիոն չորս հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ, որից **5 412 000** (հինգ միլիոն չորս հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

**6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

**7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Ջերմուկի համայնքապետարան | «Մավշին» ՍՊԸ |
| ք. Ջերմուկ Մյասնիկյան 8 | ՀՀ Վայոց Ձորի մարզ, գ. Զառիթափ |
| Կենտրոնական գանձապետարան | «ԱյԴի Բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900362066012 | Հ/Հ 11813008834700 |
| ՀՎՀՀ 08913735 | ՀՎՀՀ 08911644 |
| համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան | տնօրեն՝ Մ. Մաթևոսյան |
| _____ | _____ |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված թիվ 1*
*«05 » օգոստոսի 2019թ. կնքված*
*N «ՎՁՄՋՔ-ԳՀԱՇՁԲ-ՍԴ-19/1» ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ի ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Աշխատանքների ծավալների ամփոփագիր

| | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **Քանդման աշխատանքներ** | | | | |
| 1 | Պատուհանների ապամոնտաժում գոգափայտերով թեքությունների սվաղի մասնակի քանդելով | մ2 | 28.75 | 2.14 | 61.50 |
| 2 | Ապաեբլոկներով բացվածքի քանդում | մ2 | 55.75 | 1.02 | 56.98 |
| 3 | Մետաղական դռների ապամոնտաժում | մ2 | 3.78 | 4.52 | 17.10 |
| 4 | Դռների ապամոնտաժում | մ2 | 20.28 | 1.27 | 25.74 |
| 5 | Շեպերի սվաղի լրացուցիչ քանդում | մ2 | 15.00 | 0.80 | 12.07 |
| 6 | Բետոնե հատակի քանդում | մ3 | 20.70 | 17.81 | 368.58 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 7 | Միջնորմների քանդում | մ2 | 192.00 | 0.87 | 166.97 |
| 8 | Պատի քանդում | մ3 | 5.25 | 13.28 | 69.71 |
| 9 | Պատերից  և առաստաղից սվաղի քանդում | 100մ2 | 4.02 | 19.24 | 77.34 |
| 10 | Բետոնե հիմքի քանդում | մ3 | 9.25 | 48.19 | 445.80 |
| 11 | D-50մմ մետաղական խողովակի ապամոնտաժում | 100մ | 0.21 | 60.70 | 12.75 |
| 12 | D-100մմ թուջե խողովակի ապամոնտաժում | 100մ | 0.21 | 90.06 | 18.91 |
| 13 | Շին. աղբի հավաքում, բարձում եւ տեղափոխում 5կմ | տ | 65.50 | 3.85 | 252.46 |
| 14 | Աշխատանք թափոնատեղում | 1000մ3 | 0.06 | 48.52 | 3.06 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Հիմքեր** | | | | |
| 1 | III կարգի գրունտի մշակում ձեռքով | $մ^3$ | 4.8 | 2.27 | 10.89 |
| 2 | Բուտաբետոնե հիմքի պատրաստում B15 դասի բետոնից | $մ^3$ | 2.8 | 57.28 | 160.39 |
| 3 | Ե/բ միաձույլ ծածկի պատրաստում B25 դասի բետոնից | $մ^3$ | 1.76 | 90.92 | 160.02 |
| 4 | Ամրան Ի8А-I | տ | 0.0550 | 519.21 | 28.56 |
| 5 | Ամրան Ի12А500С | տ | 0.145 | 508.21 | 73.69 |
| | **Արտաքին պատեր** | | | | |
| 1 | Պատի շար 20սմ հաստ. պեմզոբլոկից | մ3 | 5.80 | 24.85 | 144.15 |
| 2 | Պատերի շարվածքի ամրանավորում | տ | 0.028 | 585.19 | 16.39 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 3 | Անցքերի լցում բետոնով B15 դասի բետոն | մ3 | 5.80 | 13.63 | 79.04 |
| 4 | Պատի ուղղահայաց հիդրոմեկուսացում իզոգամով | մ2 | 14.32 | 2.13 | 30.43 |
| 5 | Պատի երեսապատում պեռլիտե սալերով 50մմ հաստությամբ | 100մ2 | 1.335 | 214.41 | 286.23 |
| 6 | Պատի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստությամբ | մ2 | 58.520 | 16.09 | 941.81 |
| 7 | ե/բ միաձույլ սյուների պատրաստում B22.5 դասի բետոնից | մ3 | 0.32 | 120.73 | 38.63 |
| 8 | Ամրան Ի8А-I | տ | 0.020 | 518.76 | 10.38 |
| 9 | Ամրան Ի18А500С | տ | 0.13 | 504.19 | 64.54 |
| 10 | Ե/բ միաձույլ հեծանների պատրաստում B25 դասի բետոնից | մ3 | 1.01 | 99.88 | 100.88 |
| 11 | Ամրան Ի8А-I | տ | 0.0350 | 467.95 | 16.38 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 12 | Ամրան Ի18А500С | տ | 0.202 | 457.92 | 92.50 |
| | **Միջնորմներ** | | | | |
| 1 | Միջնորմների կառուցում թեթեւաբետոնե բլոկներից 100մմ հաստությամբ | մ2 | 218.00 | 3.40 | 740.61 |
| 2 | Միջնորմների շարվածքի ամրանավորում | տ | 0.05 | 585.19 | 29.26 |
| 3 | Միջնորմների ամրացում պատերի եւ առաստաղների հետ | տ | 0.02 | 823.41 | 12.35 |
| | **Տանիք** | | | | |
| 1 | Հարթեցնող շերտի պատրաստում ցեմ. ավազե շաղախից h=40մմ | մ2 | 0.12 | 1.88 | 0.22 |
| 2 | Ծածկի գոլորշամեկուսացում 1 շերտ իզոգամով բիտումի վրա | 100մ2 | 0.12 | 436.51 | 51.11 |
| 3 | Տանիքի ջերմամեկուսացում խարամով, 150մմ հաստությամբ | մ3 | 1.76 | 7.86 | 13.83 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 4 | Տանիքի ծածկույթի պատրաստում ցինկապատ գունավոր մանրապրոֆիլային թիթեղից, ներառյալ կավարամածը ԿՊ-35-0,5մմ | մ2 | 27.86 | 6.85 | 190.76 |
| 5 | Գագաթնամասի պատրաստում ցինկապատ գունավոր հարթ թիթեղից d=0.5մմ | մ2 | 2.20 | 4.50 | 9.91 |
| | **<u>Դռներ</u>** | | | | |
| 1 | Ալյումինե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ջերմակամուրջով, ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ դռան տեղադրում(արտերկիր) | մ2 | 8.58 | 88.23 | 757.01 |
| 2 | Մետտաղապլաստե սպիտակ խուլ դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները, ներկումը/ 4հատ սանհանգ. | մ2 | 5.88 | 41.49 | 243.99 |
| 3 | Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, դռների տեղադրում 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր) | մ2 | 30.24 | 52.43 | 1585.52 |
| | **<u>Պատուհաններ</u>** | | | | |
| 1 | Մետաղապլաստե երկշերտ ապակեպատ սպիտակ պատուհանների տեղադրում /ներառյալ ապակեփաթեթը, բռնակ փակիչը, սարքերը, ներկումը/ բացվող | մ2 | 22.00 | 48.73 | 1072.07 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Մետաղապլաստե երկշերտ ապակեպատ սպիտակ պատուհանների տեղադրում /ներառյալ ապակեփաթեթը, բռնակ փակիչը, սարքերը, ներկումը/ չբացվող | մ2 | 11.00 | 35.17 | 386.91 |
| 3 | Պլաստմասե սպիտակ պատուհանագոգերի տեղադրում 25սմ լայնությամբ | մ2 | 33.00 | 0.78 | 25.61 |
| 4 | Պլաստմասե սպիտակ պատուհանագոգերի արժեքը 25սմ լայնությամբ | գմ | 41.00 | 2.53 | 103.88 |
| | **<u>Հատակներ</u>** | | | | |
| 1 | Ցեմենտային նախաշերտի /հարթեցնող շերտի/ փռում 50մմ հաստությամբ | մ2 | 431.37 | 2.32 | 999.82 |
| 2 | Ամրանային ցանց Ի5Բp-I, 150x150մմ բջիջներով | մ2 | 418.00 | 1.42 | 593.07 |
| 3 | Հատակի հիդրոմեկուսացում 1 շերտ իզոգամ | մ2 | 37.50 | 4.27 | 160.24 |
| 4 | Հատակների պատրաստում պրեսգրանիտից/սանհանգույց/ | մ2 | 37.50 | 12.34 | 462.88 |
| 5 | Պրեսգրանիտե շրիշակների տեղադրում h=100մմ | գմ | 43.75 | 1.50 | 65.80 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 6 | Լամինատե հատակի պատրաստում 8մմ հաստությամբ /ներառյալ սպունգը և շրիշակները/ | մ2 | 60.52 | 6.09 | 368.56 |
| 7 | Վինիլային հատակի իրականացում /ներառյալ գրունտը, ինքնահարթեցնող հատակը 2-3մմ, սոսինձը/ | մ2 | 334.82 | 18.62 | 6234.18 |
| 8 | շրիշակների տեղադրում h=100մմ | 100գմ | 3.65 | 96.28 | 351.44 |
| 9 | Հատակի ջերմոմեկուսացում պենոպլեքսլ 50մմ | մ2 | 431.37 | 5.40 | 2328.52 |
| | **Ներքին հարդարում** | | | | |
| 1 | Պատերի գաջե սվաղում բարելավված որակի | մ2 | 701.00 | 2.40 | 1683.68 |
| 2 | Առաստաղի գաջե սվաղում բարելավված որակի | մ2 | 420.00 | 2.84 | 1192.23 |
| 3 | Թեքությունների գաջե սվաղում | մ2 | 22.50 | 7.68 | 172.85 |
| 4 | Ֆրանսիական Զգովի առաստաղի պատրաստում պոլիէթիլենային թաղանթով /ներառյալ մետաղական կմախքը, պտուտակները, դետալները և տեղադրումը/ | մ2 | 420.00 | 8.39 | 3523.56 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 5 | Պատերի հարթեցում ց/ավազե սվաղ /հախճասալի տակ/ | մ2 | 120.00 | 1.45 | 174.56 |
| 6 | Պատերի երեսապատում հախճասալով | մ2 | 120.00 | 8.30 | 995.85 |
| 7 | Պատերի ծեփամածկում | մ2 | 701.00 | 0.25 | 178.38 |
| 8 | Պատերի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի | մ2 | 701.00 | 1.88 | 1320.83 |
| | **Բարեկարգում** | | | | |
| 1 | III կարգի գրունտի մշակում ձեռքով | մ3 | 3 | 2.27 | 6.81 |
| 2 | Բետոնե նախապատրաստական շերտ B12.5 դասի բետոնից | մ3 | 3.7 | 44.08 | 163.10 |
| 3 | Բետոնե հիմքի պատրաստում B12.5 դասի բետոնից | մ3 | 4.2 | 59.19 | 248.60 |
| 4 | | մ3 | 0.42 | 41.93 | 17.61 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B12.5 դասի բետոնից, մետաղական ցանցով | | | | |
| 3 | Ամրանային ցանց Ի5Вр-I, 150x150մմ բջիջներով | մ2 | 13.7 | 1.42 | 19.44 |
| 4 | Ռետինե դեֆորմացիոն կարի իրականացում | գմ | 15.00 | 3.70 | 55.52 |
| 5 | Բազալտե աստիճանների տեղադրում | գմ | 8.4 | 13.87 | 116.49 |
| 6 | Հարթակի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստությամբ | մ2 | 8.8 | 13.07 | 115.04 |
| 7 | Բազրիքի տեղադրում բռնակով | գմ | 4.41 | 8.34 | 36.79 |
| 8 | Բազրիքի ներկում | մ2 | 4 | 1.29 | 5.15 |
| 9 | Ծածկարաանի մետաղական մասերի ներկում | 100մ2 | 0.275 | 90.84 | 24.98 |
| | Արտաքին ջրթողների տեղադրում 0,5մմ ցինկապատ թիթեղից | 100մ2 | 2.200 | 20.49 | 45.07 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Այլ աշխատանքներ /Կահավորում/** | | | | |
| 1 | Մետաղական վահանակի պատրասրում և մոնտաժում | տ | 0.025 | 759.74 | 18.99 |
| 2 | Մետաղական վահանակի ներկում | 100մ2 | 0.035 | 48.11 | 1.68 |
| 3 | Պատի վրա 1700x2200 չափի հայելիի տեղադրում մետաղական կմախքով | մ2 | 3.84 | 20.71 | 79.54 |
| 4 | Մետաղական վահանակի պատրասրում և մոնտաժում | տ | 0.019 | 759.74 | 14.44 |
| 5 | Մետաղական վահանակի ներկում | 100մ2 | 0.014 | 48.11 | 0.67 |
| 6 | Պատի վրա 1500x1000 չափի հայելիի տեղադրում մետաղական կմախքով | մ2 | 1.50 | 20.71 | 31.07 |
| 7 | Մետաղական վահանակի պատրասրում և մոնտաժում | տ | 0.014 | 759.74 | 10.64 |
| 8 | Մետաղական վահանակի ներկում | 100մ2 | 0.010 | 48.11 | 0.48 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 9 | Պատի վրա 1200x1000 չափի հայելիի տեղադրում մետաղական կմախքով | մ2 | 1.20 | 20.71 | 24.86 |
| 10 | Մետաղական վահանակի պատրաստում և մոնտաժում | տ | 0.053 | 759.74 | 40.27 |
| 11 | Մետաղական վահանակի ներկում | 100մ2 | 0.112 | 48.11 | 5.39 |
| 12 | Պատի վրա 5000x2000 չափի հայելիի տեղադրում մետաղական կմախքով | մ2 | 10.00 | 20.18 | 201.83 |
| 13 | Մետաղական վահանակի պատրաստում և մոնտաժում | տ | 0.022 | 759.74 | 16.71 |
| 14 | Մետաղական վահանակի ներկում | 100մ2 | 0.023 | 48.11 | 1.11 |
| 15 | Պատի վրա 2800x1000 չափի հայելիի տեղադրում մետաղական կմախքով | մ2 | 2.80 | 21.19 | 59.32 |
| 16 | Հակահրդեհային պահարան կրակմարիչով | հատ | 3 | 46.55 | 139.64 |
| 17 | Կախիչների տեղադրում 3 տեղանոց | հատ | 7 | 4.25 | 29.78 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 18 | Բազրիքի տեղադրում Հ-1,1մ չժանգոտվող մետաղից | գմ | 7.1 | 23.45 | 166.50 |
| 19 | Վերարկուի պահարանի տեղադրում | հատ | 2 | 23.92 | 47.85 |
| 20 | Լվացարանի սեղանի տեղադրում | հատ | 1 | 19.36 | 19.36 |
| | **Կոյուղի** | | | | |
| 1 | Կոյուղու Ի50մմ չուգունե խողովակի ապամոնտաժում | մ | 21 | 0.88 | 18.52 |
| 2 | Կոյուղու Ի100մմ չուգունե խողովակի ապամոնտաժում | մ | 21 | 0.90 | 18.80 |
| 3 | Խողովակաշարի անցկացում կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակներից Ի50մմ, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 13 | 1.33 | 17.24 |
| 4 | Խողովակաշարի անցկացում կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակներից Ի100մմ, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 14 | 2.36 | 33.09 |
| 5 | Կերամիկական զուգարանակոնքերի տեղադրում ցածր բաքով | հատ | 4 | 33.88 | 135.53 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 6 | Կերամիկական լվացարանների տեղադրում սիֆոնով | հատ | 5 | 20.63 | 103.15 |
| 7 | Կերամիկական միզամանների տեղադրում | հատ | 2 | 15.23 | 30.46 |
| 8 | Հոսակի տեղադրում | հատ | 5 | 8.23 | 41.15 |
| 9 | Ընդտակի(поддон) տեղադրում | կ-տ | 6 | 41.82 | 250.89 |
| 10 | Օճառի դիսպենսերի տեղադրում | հատ | 2 | 3.04 | 6.08 |
| 11 | Ճկուն միացումներ լվացարանների և զոգարակոնքերի համար Ի15մմ, L≈0,5մ | հատ | 14 | 0.61 | 8.51 |
| 12 | Ստուգիչ Ի100մմ | հատ | 4 | 2.29 | 9.17 |
| 13 | Պոլիէթիլենային անցքամաքրիչ Ի50մմ | հատ | 5 | 1.67 | 8.33 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 14 | Պոլիէթիլենային ծունկ Ի100մմ | հատ | 4 | 1.48 | 5.93 |
| 15 | Պոլիէթիլենային ծունկ Ի50մմ | հատ | 4 | 1.15 | 4.59 |
| 16 | Պոլիէթիլենային եռաբաշխիչ Ի100x100մմ | հատ | 4 | 2.02 | 8.09 |
| 17 | Պոլիէթիլենային եռաբաշխիչ Ի100x50մմ | հատ | 8 | 2.13 | 17.08 |
| 18 | Պոլիէթիլենային եռաբաշխիչ Ի50x50մմ | հատ | 10 | 1.80 | 18.04 |
| 19 | Պոլիէթիլենային անցում Ի100x50մմ | հատ | 5 | 1.36 | 6.82 |
| 20 | Անցքերի բացում պատերում | հատ | 4 | 0.76 | 3.05 |
| 21 | Անցքերի վերականգնում | հատ | 4 | 0.92 | 3.66 |
| | **Ներքին ջրամատակարարում** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Խողովակաշարի անցկացում մետաղապլաստե խողովակներից Ի50մմ, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 26 | 1.34 | 34.83 |
| 2 | Խողովակաշարի անցկացում մետաղապլաստե խողովակներից Ի32մմ, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 22 | 1.53 | 33.77 |
| 3 | Լատունե փականների տեղադրում Ի32մմ | հատ | 2 | 5.23 | 10.47 |
| 4 | Լվացարանի ծորակ-խառնիչների տեղադրում | հատ | 5 | 11.05 | 55.27 |
| 5 | Ցնցուղի ծորակ-խառնիչների տեղադրում | հատ | 6 | 11.05 | 66.32 |
| 6 | Ձեւավոր նասեր մետաղապլաստե խողովակների համար /տարբեր/ | հատ | 35 | 1.18 | 41.15 |
| 7 | Անցքերի բացում պատերում | հատ | 2 | 1.01 | 2.03 |
| 8 | Անցքերի վերականգնում | հատ | 2 | 1.19 | 2.38 |
| 9 | Ացքերի բացում հիմքի պատում | հատ | 1 | 4.76 | 4.76 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 10 | Անցքի վերականգնում | հատ | 1 | 1.19 | 1.19 |
| 11 | Խողովակաշարի միացում գոյություն ունեցող ջրագծին | տեղ | 1 | 9.09 | 9.09 |
| 12 | Անցքերի բացում ծածկերում | հատ | 7 | 1.25 | 8.74 |
| 13 | Անցքերի վերականգնում | հատ | 7 | 1.19 | 8.33 |
| 14 | Զտիչ Ի25մմ | հատ | 1 | 3.97 | 3.97 |
| 15 | Հակադարձ փականի տեղադրում Ի25մմ | հատ | 1 | 5.94 | 5.94 |
| | **Էլ.մատակարարում** | | | | |
| 1 | Էլեկտրական լուսավորության վահանակի տուփ 200x195x150մմ չափերի | հատ | 1 | 10.72 | 10.72 |
| 2 | Ելքային ավտոմատ անջատիչ միաֆազ 25Ա | հատ | 4 | 3.07 | 12.27 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 3 | Ելքային ավտոմատ անջատիչ միաֆազ 32Ա | հատ | 4 | 3.65 | 14.60 |
| 4 | Լուսատուների տեղադրում առաստաղում LED Լույսի Պանել 18w | հատ | 40 | 6.04 | 241.77 |
| 5 | Լուսատուներ տեղադրում կախովի առաստաղի մեջ, LED տիպի Պլաֆոն 32w | հատ | 12 | 21.96 | 263.55 |
| 6 | Մեկտեղանի վարդակների տեղադրում 220Վ, 16Ա հողանցիչով | հատ | 65 | 1.82 | 118.52 |
| 7 | Մեկստեղնավոր անջատիչների տեղադրում 230Վ, 6Ա | հատ | 19 | 1.55 | 29.44 |
| 8 | Ռեվերսային անջատիչների տեղադրում | հատ | 2 | 2.18 | 4.36 |
| 9 | Տուփեր անջատիչների եւ վարդակների տեղադրման համար | հատ | 86 | 0.12 | 10.09 |
| 10 | Տուփեր ճյուղավորման | հատ | 55 | 1.31 | 72.30 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11 | ՊՊԲ 3x2,5մմ2 հատվածքով պղնձե հաղորդալարի անցկացում խողովակի միջով | գմ | 150 | 0.71 | 106.03 |
| 12 | ՊՊԲ 2x2.5մմ2 հատվածքով պղնձե հաղորդալարի անցկացում խողովակի միջով | գմ | 860 | 0.26 | 224.50 |
| 13 | ԱՊԲ 1x70մմ2 հատվածքով պղնձե հաղորդալարի անցկացում խողովակի միջով | 100մ | 0.32 | 38.76 | 12.40 |
| 14 | Ճկախողովակ Ի20մմ | 100մ | 10.42 | 16.72 | 174.19 |
| | **<u>Ջեռուցում</u>** | | | | |
| 1 | Q=50կվտ ջեռուցման պատի կաթսա «Տուրբո» համակարգով | հատ | 1 | 1237.84 | 1237.84 |
| 2 | Ջեռուցման մարտկոցների տեղադրում | էկմ | 55.2 | 0.72 | 39.61 |
| 3 | Մարտկոցների արժեքը Н-600մմ | հատ | 210 | 6.29 | 1321.29 |
| 4 | Մարտկոցների աքսեսուարներ | հատ | 21 | 1.64 | 34.48 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 5 | Փական D=25մմ | հատ | 5 | 2.88 | 14.42 |
| 6 | Փական D=20մմ | հատ | 4 | 2.88 | 11.54 |
| 7 | Օդահան ծորանի տեղադրում D=15մմ | հատ | 21 | 0.54 | 11.25 |
| 8 | Պոլիպրենային ֆոլգապատ խողովակ D=25մմ | մ | 3 | 2.91 | 8.73 |
| 9 | Պոլիպրենային ֆոլգապատ խողովակ D=20մմ | մ | 126 | 3.05 | 384.43 |
| 10 | Պոլիպրենային ֆոլգապատ խողովակ D=15մմ /տաք հատակ/ | մ | 98 | 3.18 | 312.08 |
| 11 | Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ25-25-25 | հատ | 2 | 0.24 | 0.49 |
| 12 | Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ25-25-20 | հատ | 24 | 0.19 | 4.67 |
| 13 | Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ20-20-20 | հատ | 36 | 0.17 | 6.13 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 14 | Պոլիպրոպիլենային անկյունակ պրեսD=25մմ | հատ | 12 | 1.05 | 12.57 |
| 15 | Պոլիպրոպիլենային անկյունակ պրեսD=20մմ | հատ | 36 | 0.58 | 21.01 |
| 16 | Պոլիպրոպիլենային պրես անցում 25-20 | հատ | 2 | 0.73 | 1.45 |
| 17 | Համակարգի փորձարկում | 100մ | 0.93 | 7.92 | 7.37 |
| 18 | Ձևավոր մասեր Φ=25մմ /ամերիկանկա/ | հատ | 4 | 1.39 | 5.56 |
| 19 | Ձևավոր մ  ասեր Φ=20մմ /ամերիկանկա/ | հատ | 36 | 1.39 | 50.02 |
| 20 | Ջեռուցման մարտկոցների կարգավորող փական | հատ | 18 | 2.45 | 44.09 |
| 21 | Ջեռուցման մարտկոցների խցանային փական | հատ | 18 | 2.45 | 44.09 |
| | **Օդափոխություն** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1 | Առանցքային օդամուղների տեղադրում | կ-տ | 9 | 12.00 | 107.99 |
| 2 | Օդատարի անցկացում 200մմ պոլիէթիլենե խողովակից | մ2 | 63.04 | 13.99 | 882.18 |
| 3 | Անցքերի բացում պատերում | հատ | 9 | 2.90 | 26.08 |
| 4 | Օդափոխության ճաղավանդակի տեղադրում | հատ | 9 | 5.40 | 48.58 |
| | ***Ընդամենը*** | | | | 38607.21 |
| | ***Չնախատեսված ծախսեր 3%*** | | | | 1158.216 |
| | ***Ընդամենը*** | | | | 39765.42 |
| | ***ԱԱՀ 20%*** | | | | 7953.084 |
| | ***Ամբողջը*** | | | | 47718.51 |

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Ջերմուկ, Ազատամարտիկների 16 հասցեում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362066012
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Մավշին» ՍՊԸ
ՀՀ Վայոց Ձորի մարզ, գ. Զառիթափ
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11813008834700
ՀՎՀՀ 08911644
տնօրեն՝ Մ. Մաթևոսյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

*Հավելված թիվ 2*
*«05 » օգոստոսի 2019թ. կնքված*
*N «ՎՁՄՋՔ-ԳՀԱՇՁԲ-ՍԴ-19/1» ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ի ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Ջերմուկ համայնքի «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի մարզադպրոցի մասնաշենքի հիմնանորոգման եվ արդիականացման աշխատանքներ | 06.08.2019թ. | 30.11.2019թ. |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | 06.08.2019թ. | 30.11.2019թ. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362066012
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Մավշին» ՍՊԸ
ՀՀ Վայոց Ձորի մարզ, գ. Զառիթափ
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11813008834700
ՀՎՀՀ 08911644
տնօրեն՝ Մ. Մաթևոսյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

*Հավելված N 3*
*«05 » օգոստոսի 2019թ. կնքված*
*N «ՎՁՄՋՔ-ԳՀԱՇՁԲ-ՍԴ-19/1» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45611300 | Ջերմուկ համայնքի «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության եվ մշակույթի կենտրոնե ՀՈԱԿ-ի մարզադպրոցի մասնաշենքի հիմնանորոգման եվ արդիականացման աշխատանքներ | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | 32 472 000 | 32 472 000 | … % | **32 472 000** |

## ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362066012
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

## ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մավշին» ՍՊԸ
ՀՀ Վայոց Ձորի մարզ, գ. Զառիթափ
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11813008834700
ՀՎՀՀ 08911644
տնօրեն՝ Մ. Մաթևոսյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

*Հավելված թիվ 4*
*«05 » օգոստոսի 2019թ. կնքված*
*N «ՎՁՄՋՔ-ԳՀԱՇՁԲ-ՍԴ-19/1» ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*«05 » օգոստոսի 2019թ. կնքված*
*N «ՎՁՄՋՔ-ԳՀԱՇՁԲ-ՍԴ-19/1» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն